«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 10951 «30» 06 2021թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ժ/պ-ի Գ.Գ.Գևորգյանի 2021թ.-ի հունիսի 24-ի № 117-§ 31 հրամանը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի /այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ/ կանոնադրության 28-րդ կետի 13-րդ ենթակետով՝

Հրամայում եմ.

1. 2021թ.-ի ԵՊՀ ԻՄ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվի «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին ԵՊՀ ԻՄ-ի հիմնական աշխատողներին վճարել դրամական պարգևատրում՝ նրանց հիմնական աշխատանքային պայմանագրով (անհատական իրավական ակտով) 2021 թվականի ապրիլ ամսվա համար հաշվարկված աշխատավարձի 50 (հիսուն) տոկոսի չափով՝ բայց ոչ ավելի քան 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) դրույքը:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով սահմանված պարգևատրումը չի վճարվում 2021 թվականի ընթացքում վեց ամսից պակաս աշխատանքային ստաժ ունեցող աշխատողներին և սույն հրամանի ստորագրման օրվա դրությամբ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողներին:

3. ԵՊՀ ԻՄ-ի գլխավոր հաշվապահին՝ սույն հրամանով սահմանված դրամական պարգևատրումը վճարել սկսած 2021թ. հուլիսի 03-ից:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ